Ես այս կամ այն չափով ծանոթ էի նախկին մրցույթներին ներկայացված զծագրական նյութերին, նրանց արդյունքները , որ զոհացուցիչ չէին, առիթ տվեցին իր ժամանակին այդ մասին գրել ընթացիկ մամուլում, առաջարկության կարգով հիշեցնելով այն, ինչ կրկնեցի ,,Երեկոյան Երևանի,, անցած տարվա դեկտեմբերի 16-ի համարում:

Այստեղ ներկայացված նախագծերի ծանոթությունը մազաչափ անգամ առիթ չի տալիս նահանջելու այն հաստատ համոզումից, որ Հյուսիսային պողոտայի շուրջը Օրենքով արգելվի որևէ կառուցապատում և ողջ տարածքը հատկացվի միայն ու միայն կանաչապատման: Ահա այս հարցն է, որ պիտի խոսակցության առարկա դառնա, իսկ թե նախագիծը առանձին վերցված ինչպիսի որակով է ներկայացված, այդ, ըստ իս , հարցի երկրորդ կողմն է:

Ես շարունակ մտածում էի, թե թերևս մեղքի շատը նախագծային առաջադրանք տվողինն է: Բայց կարդալով Ֆ.Նախշքարյանի 1987թ. դեկտեմբերի 31-ի ,,Կոմունիստ,, թերթի ,, Մայրաքաղաքի Հյուսիսային պողոտան,, հոդվածը հասկանալի դարձավ, որ մրցույթի ծրագրում գրված է,,Մրցույթ Հյուսիսային պողոտայի կառուցապատման իդեայի...,,: Ահա այստեղ է, որ ճարտարապետները չպիտի կառչեին եսասիրական ինքնանպատակ կառուցապատման հմայքին, պետք է, որ ուշադիր լինեին նաև լայն հասարակության ձայնին: Օրինակ. անցյալ տարի հեռուստատեսությամբ ականատես եղանք գրող Ջորի Բալայանի և ճարտարապետ Գուրգեն Մուշեղյանի հարցազրույցին: Եվ եթե գրողն առաջարկում էր խարխուլ խրճիթներից ազատվող տարածքը կանաչապատել և ՈՉ կառուցապատել անանուն շենքերով, ապա քաղաքի գլխավոր ճարտարապետը խուսանավում էր, կոնկրետ չէր հայտնում իր վերաբերմունքը առաջադրված հարցին:

Այժմ ես ափսոսում եմ այն 10-15 տարիները, որ կորցրինք անՕգուտ, մինչդեռ ծառապատելու դեպքում, այժմ Երևանի կենտրոնում կունենայինք 5-6 հեկտարանոց հովաշունչ պուրակ- հանգստավայր:

Արդ, ինչ կպատահի, եթե իրականացվի այն նախագիծը, որ վեց տարբերակներով ներկայացվել է քննարկման: Այդ նախագծի հիմքում դրված է այն միտքը, թե Հյուսիսային պողոտան քաղաքի սիրտն է ու այնտեղ պետք է կենտրոնացնել ամեն ինչ՝ ողջ Երևանի գործող առՕրյան: Ըստ նրանց Հյուսիսային պողոտայի կառուցապատումը շենքերով ոչ միայն նպատակահարմար է, այլ և

սոցիալապես հասունացել է նրա պահանջը, չէ որ Երևանին ինչպես թարմ օդ անհրաժեշտ է քաղաքային բուռն կյանքի կազմակերպման համար, հանդիպումների, միմյանց հաղորդակցվելու համար:

Ահա այս նկատի առնելով, նրանք նախատեսել են կառուցել եռահարկ կենտրոն այսպես՝ տրանսպորտային գետնահարկ, զարժների գետնահարկ, իսկ վերևում՝ հյուրանոցներ, ոչ ավել, ոչ պակաս 500տեղանոց, նաև 200 տեղանոց Դիագնոստիկ կենտրոն, շախմատային արվեստի կենտրոն, տարբեր նպատակների ցուցասրահներ, ակումբներ, կինոթատրոններ; խաղերի կենտրոն, տեխնիկական ստեղծագործության ցուցասրահ, հանրախանութի ընդարձակում, պատկերասրահի ընդարձակում, այլ խանութներ և այլն: Մի խոսքով- այդ տարածքը կդառնա ծխի, աղմուկի, շարժումների կենտրոն. կատարյալ Սոդոր-գոմոր:

Պետք է լավ հիշել, որ Հյուսիսային պողոտան քաղաքի կենտրոնում է, բայց կենտրոն չէ, կենտրոն է Լենինի հրապարակը: Միշտ էլ այս կամ այն չափով ակտիվ միջավայրից մինչև մյուս ակտիվ միջավայրը ընկնում է, այսպես ասած, հանգիստ, չեզոք տարածություն: Ահավասիկ՝ Հիսուսամյակին նվիրված հուշարձանից և կասկադից հետո ընկած է Թամանյանի չեզոք պուրակը, ապա գալիս է Օպերայի շինությունը, նրան պետք է հաջորդի ,,Հյուսիսային պողոտա,, անվանված չեզոք հատվածը, գալիս է Լենինի հրապարակը, սրան հաջորդում է որպես չեզոք հատված Շահումյանի պուրակը. սրանից հետո Շահումյանի հրապարակն է ու արձանը,, ապա նորից չեզոք գոտի՝ նոր պուրակը Կոմայգու և Կիրովի անվան այգիների միջև. Հետևում է ակտիվ միջավայր՝ Մյասնիկյանի հրապարակն ու արձանը:

Այս Օրինաչափությամբ հասկացվում է,որ կենտրոններ հանդիսացող Լենինի և Օպերայի հրապարակների միջև նոր կենտրոնի ստեղծումը ,,Հյուսիսային պողոտայի,, հատվածում անտեղի է, քաղաքաշինարարության առումով՝ սխալ:

Մեր մայրաքաղաքում քաղաքաշինությունը վերջին ժամանակներս ընթացել է մեծամեծ սխալներ գործելով, որոնք չեն մոռացվում, արձանագրվում են, այդտեղ հիշվում են բոլոր սխալներ գործողների անունները, որոնք քանդել են այն, ինչ որ չպիտի քանդվեր, կառուցվել են այն վայրերում, ուր չպիտի կառուցվեին և այլն: Այնպես որ մեր Ոլերի ճարտարապետները պետք է խուսափեն եսասիրական, էգոիստական ձկտումների իրականացումներից, եթե չեն ուզում պատմության պատժին կամ անեծքին արժանանալ:,,Հյուսիսային պողոտայի,, շինություններով կառուցապատելը սերունդների կողմից կգնահատվի որպես չարագործություն ապրողների հանդեպ: